Էլեկտրական կարի մեքենա

Կան տեղեկություններ, որ առաջին կարող մեքենան ստեղծվել է 14–րդ դարում՝ հոլանդացիների կողմից, հետագայում 1850 թվականին ստեղծվեց և կիրառվեց ավելի կատարելագործված կարի մեքենա: Կարի մեքենաները՝ ըստ իրենց նշանակության, զարգացման մեծ էվոլյուցիա անցան, սկզբում ձեռքի, ապա ոտքի, այժմ էլ էլեկտրական շարժաբերով՝ որը գործարկվում է ավտոմատ կերպով, ոտնակի միջոցով: Էլեկտրական շարժաբերով կարի մեքենաները բավականին թեթևացրին կենցաղային հոգսերը և գրեթե բոլորի համար դարձան հասանելի: Տարեցտարի կատարելագործվեցին կարի մեքենայի հնարավորությունները, որոնք էլեկտրական հոսանքի շնորհիվ լուծում են ժամանակի և արագության հետ կապված խնդիրները: Կարի բնագավառում գրանցվեցին հաջողություններ, զարգացան թեթև արդյունաբերությանը համապատասխան ճյուղերը (հագուստի, կոշիկի և այլն), որոնցում մեծ դեր ունեցան ավտոմատ կարի մեքենաները:



Ահա, ներկայացված գծապատկերում հստակ երևում են կենցաղային կարի մեքենայի էլեկտրական շարժաբերը, ոտնակը, սպառիչը, վարդակը և հաղորդալարերը: